



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2018 թ. հունիսի 28-ին, N 71

ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 20-ի N 136-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ապարանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2018 թվականի հունիսի 29-ի մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի “Ապարանի բժշկական կենտրոն” փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2018 թվականի հունիսի 29-ի մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի

1. Հովհաննես Ասատրյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/
2. Գայանե Վարդանյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ /հանձնաժողովի քարտուղար/
3. Հովհաննես Հովհաննիսյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի օգնական
4. Մերի Շահազիզյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
5. Սաթենիկ Զորյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
6. Արայիկ Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ
7. Արամ Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի Ապարանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար



Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ